

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ԱԿՈՒՆՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 4 (20)

ԵՐԵՎԱՆ 2018

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝

ԱՇՈՏ ՆԵՐՄԻՍՅԱՆ - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ասատրյան Ա. Գ. - արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

Գասպարյան Ս. Ք. - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Դերձյան Հ. Մ. - իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

Զաքարյան Ս. Ա. - փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Ղարիբյան Գ. Ա. - տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ

թղթակից անդամ

Մանուչարյան Հ. Գ. - քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր

Մինասյան Է. Գ. - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Միքայելյան Մ. Վ. - տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Միքայելյան Վ. Հ. - հոգեբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Մուրադյան Ս. Պ. - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Նահապետյան Ռ. Ա. - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ակուք. Գիտական հոդվածների ժողովածու/Խմբ. խորհուրդ՝ Ս.Ա. Առաքելյան և ուրիշ; Գլխ. խմբ.՝ Ա.Ա. Ներսիսյան - Եր.: ԵՊՀ հրատ., 2018թ. - 238 էջ:

© ԵՊՀ հրատարակչություն, 2018 թ.

© Հեղ. խումբ, 2018 թ.

YEREVAN STATE UNIVERSITY

IJEVAN BRANCH

A K U N Q

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

NUMBER 4 (20)

YEREVAN 2018

YSU PUBLISHING HOUSE

EDITOR-IN-CHIEF

ASHOT NERSISYAN - doctor of historical sciences, professor

EDITORIAL COUNCIL

Asatryan A. G. - doctor of art, professor

Derdzyan H. M. - doctor of law, professor

Gasparyan S. K. - doctor of philological sciences, professor

Gharibyan G. A. - doctor of economic sciences, professor, associate member of
NAS, RA

Manucharyan H. G. - doctor of political science, professor

Minasyan E. G. - doctor of historical sciences, professor

Mikaelyan M. V. - doctor of economic sciences, professor

Mikaelyan V. H. - doctor of psychological science, professor

Muradyan S. P. - doctor of philological sciences, professor

Nahapetyan R. A. - doctor of historical sciences, professor

Zakaryan S. A. - doctor of philosophy, professor

Akunq. Collection of Scientific Articles/Editorial Board - S. A. Arakelyan and others; Editor – in – chief - A. A. Nersisyan. - Yerevan; YSU Publishing House, 2018 – 238 pages.

© YSU Publishing House 2018

© Author group, 2018

ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ «ՄԹՆՇԱՂԻ ԱՆՈՒՐՋՆԵՐ»
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՇԱՐՔՈՒՄ
ՄԵՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Գեղարվեստական ոճի խնդիրը իրականության գեղագիտական վերարտադրումն է, հետևաբար «գրականության մեջ իրականության տեսանելի, պատկերավոր արտացոլումը, որը հենված է հուզական ընկալման վրա, առանձնահատուկ պահանջներ է առաջադրում լեզվի նկատմամբ»¹: Այս իմաստով լեզվում հատուկ կարևորություն են ստանում պատկերավորման այն միջոցները, որոնց օգնությամբ հնարավոր է դառնում առավել գունեղ ներկայացնել պատկերվող կյանքի առարկաներն ու երևույթները: «Պատկերավորման ու արտահայտչական միջոցների օգնությամբ, – գրում է Ա. Մարությանը, – գրողը ոչ միայն իրական ու շոշափելի է դարձնում մտքի առարկան, ընթերցողի երևակայության մեջ առաջ է բերում համապատասխան մտապատկերներ՝ ազդելով նրա երևակայության վրա, այլև նկարագրվող երևույթը դարձնում է վառ ու տպավորիչ, ուժեղացնում բանաստեղծական խոսքի հուզական ներգործությունը»²:

Լեզվի պատկերավորման միջոցները սովորաբար բաժանվում են երկու խմբի՝ այլաբերություններ (տրոպ) և բանադարձումներ (ֆիգուրա): «Այլաբերությունները բառային միավորներ են, որոնք կառուցվում են բառերի ու բառակապակցությունների միջոցով, իսկ բանադարձումներն ավելի շատ հենվում են շարահյուսական տարբեր կառույցների վրա»³: Ի տարբերություն այլաբերությունների, որոնց դեպքում առաջնայինը բառերի փոխաբերական գործածություններն են, ոճական բանադարձումների դեպքում առաջնայինը ոչ թե բառի փոխաբերական կամ այլաբանական կիրառությունն է, այլ յուրահատուկ հնչերանգը, արտասանական առոգանությունը:

Քնարական հերոսի հոգեվիճակն արտացոլող ստեղծագործություններում կարևոր նշանակություն են ստանում պատկերավորման այն միջոցները, որոնց օգնությամբ ուժեղացվում է բանաստեղծության ներգործման գործառույթը, արտահայտչականությունը: Այս առումով հատկապես առանձնանում է Վահան Տերյանի բանաստեղծությունների անդրանիկ շարքը՝ «Մթնշաղի անուրջները», որում բազմաթիվ պատկերավորման միջոցների կողքին կիրառված է նաև աստիճանավորման արտահայտչամիջոցը:

Աստիճանավորումը, ինչպես պատկերավորման մյուս միջոցները, պայմանավորված են լեզվական միջոցների՝ խոսքի բովանդակության

¹ А. Рубайло, Художественные средства языка, Москва, 1961, с. 6.

² Ա. Մարության, Եղիշե Չարենցի չափածոյի լեզուն ու ոճը, Երևան, 1979, էջ 152:

³ Լ. Եզեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2003, էջ 333:

նկատամար ունեցած հարաբերությամբ: Ասել է թե՛ ոչ միայն պատկերավորման միջոցները, այլև լեզվական բոլոր իրողությունները գնահատվում և արժևորվում են բովանդակության ու դրա լեզվական արտահայտության համապատասխանության հայեցակետով: Հետևաբար պատկերավորման միջոցների ուսումնասիրությունը ինքնանպատակ չէ. ուղղված է խոսքարվեստի էական կողմերի բացահայտմանը:

Աստիճանավորումը ոճական հնար է, շարահյուսական դարձույթ, որի դեպքում բառերի հաջորդական դասավորությամբ ընդգծվում են նկարագրվող առարկայի կամ երևույթի աստիճանական զարգացումը, սաստկացումը, որը գնալով ուժեղացնում է տվյալ արտահայտության, խոսքի իմաստը⁴: Այլ կերպ ասած՝ աստիճանավորումը համանիշ բառերի զուգադրումն է իմաստի ուժեղացման կամ թուլացման եղանակով, և տարբերակվում է բարձրացող ու իջնող աստիճանավորում:

Բարձրացող աստիճանավորումը խոսքի այնպիսի կառուցվածք է, երբ յուրաքանչյուր հաջորդող արտահայտություն կամ դարձվածք ավելի հագեցած է իմաստով, ավելի ուժգին և արտահայտիչ է, քան նախորդը, բառերի դասավորումը իմաստի, արտահայտության և հնչերանգի ուժեղացման կարգով⁵, իսկ իջնող աստիճանավորումը բարձրացողի հակառակ երևույթն է, երբ տվյալ արտահայտության մեջ բառերը դասավորվում են իմաստի, արտահայտության, հնչերանգի թուլացման եղանակով:

Տերյանի Մթնշաղի անուրջներ՝ շարքում աստիճանավորումը լայն կիրառություն ունի և նպաստում է քնարական հերոսի հույզերի ու ապրումների արտացոլմանը: Բանաստեղծը, աստիճանավորման միջոցով ստեղծագործական կառուցվածքային կողմը զուգակցելով իմաստայինին, կարողացել է ստեղծել գեղարվեստական բացառիկ պատկերներ: Շատ ստեղծագործություններում ոճական այդ միավորը նույնիսկ պայմանավորում է չափածոյի համար այդքան հատկանշական երաժշտականությունը, խոսքի գեղեցկությունն ու ներդաշնակությունը: Դիտարկենք օրինակներ.

Մոռանա՛ չ, մոռանա՛ չ ամեն ինչ,

Ամենին մոռանալ.

Չըսիրել, չըխորհել, չափսոսալ –

Հեռանա՛ չ... (I, 80)⁶

Իմաստուն խոսքեր սովորեցի ես,

Որ հրապուրեմ գորությամբ մթին,

⁴ Տե՛ս I. Եգեկյան, նշվ. աշխ., էջ 365, Է. Ջրբաշյան, Գրականության տեսություն, Երևան, 1972, էջ 268:

⁵ Ֆ. Խլղաթյան, Ոճաբանական բառարան, Երևան, 2000, էջ 17:

⁶ Տե՛ս Վ. Տերյան, Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 1, Երևան, 1972: Մեջբերված օրինակներից հետո նշվում են համապատասխան հատորն ու էջը:

Հոգիդ կախարդեմ ու հմայեմ քեզ,

Ինձ այրող հուրք նետեմ քո սրտին: (I, 94)

Առաջին բանաստեղծության մեջ աստիճանավորմանը նպաստում է նաև ձայնավորների ներդաշնակ կրկնությունը, որը հուզական ուժեղ տպավորության և արտաքին երաժշտականության ստեղծման յուրահատուկ գործոն է դառնում: Ձայնավորների արվեստավոր կրկնությամբ, աստիճանավորման միջոցով Տերյանը ոչ միայն առավել բարեհունչ է դարձնում բանաստեղծական խոսքը, այլև արտահայտչամիջոցը հանդես է բերում որպես գեղարվեստական պատկերի կերտման կարևոր բաղադրիչ: Ահա այլ օրինակ՝

Դու անհոգ նայեցիր իմ վրա

Ու անցար քո խաղով կանացի.

Ես քեզնից դառնացած հեռացա,

Ես քեզնից հեռացա ու լացի... (I, 44)

Պայծառ ըղձերը ինձ գուր մաշեցին,

Չողջունեց ինձ ոչ մի արշալույս,

Ինձ լուռ մոռացան, ինձ չհիշեցին,-

Իմ սրտում մեռան սեր, ցնորք ու հույս: (I, 59)

Դիտարկված բանաստեղծական հատվածներում բարձրացող աստիճանավորումը դրսևորվել է գործողությունների հաջորդական շղթայով՝ նայեցիր և անցար..., հեռացա և լացի, չողջունեց, մոռացան, չհիշեցին:

Մթնշաղի անուրջներ՝ շարքի ստեղծագործություններում առավել տարածված է բարձրացող աստիճանավորումը, որը հիմնականում ստեղծվում է գոյականների կամ բայերի միջոցով, ինչպես օրինակ՝

Հիշո՛ւմ ես դու ակացիան

Եվ պարտեզը իրիկվա,

Հանդիպումը մայիսյան

Պատանու և աղջկա: (I, 98)

Քնքուշ ձեռքերով պաճուճիր հոգիս,

Նստիր մահճիս մոտ ու տխուր երգիր,

Մազերդ փռիր հոգնատանջ կրծքիս

Եվ մեղմ փարատիր սիրտըս տարագիր... (I, 65)

Քնարական հերոսի հոգեվիճակի արտոցուման արտահայտչամիջոցներ են բարձրացող աստիճանավորման օրինակները բանաստեղծական ներքոհիշյալ հատվածներում.

Ես կգամ, երբ դու կըլինիս տրտում,

Երբ երազներդ հավետ կըմեռնեն,

*Ձեռքըդ կբռնեմ, ցավդդ կբռնեմ,
Կրվառեմ ուրիշ լույսեր քո հոգում... (I, 101)*

*Եվ քաղցր է լինել քո կամքի գերին,
Քո չարությունը բարիք համարել.-
Կրծքաբաց ելնել ընդդեմ քո սրին
Եվ այդ մահաբեր ձեռքը համբուրել: (I, 96)*

Բանաստեղծը աստիճանավորում է ստեղծում ոչ միայն հոմանիշ բառերի միջոցով, այլև բանաստեղծական հյուսվածքում իմաստային գույզություն է ստեղծում հաջորդական գործողություն ցույց տվող տարբեր բառերի միջև.

*Տխուր կժպտասս դու հոգնածորեն,
Ու հոգնածորեն դուրը կբքանաս.-
Սրտիս մութ ցավը անխոս կիմանաս,
Եվ արցունքներդ հանդարտ կըծորեն: (I, 78)*

Հաճախ աստիճանավորմամբ կապվում են և տրամաբանական ու հուզական ուժեղ շեշտ ստանում ոչ հոմանիշ բառային միավորները: Խոսքաշարում ոչ հոմանիշ բառերի միջև իմաստային կապ ստեղծելը Տերյանի ոճի կարևորագույն առանձնահատկություններից մեկն է: Այս դեպքում, բնականաբար, աստիճանավորման հուզաարտահայտչական երանգավորումն ավելի ակնհայտ է.

*Շեռածավալ անհայտներում պահվտած
Գալիք օրերն անհուն, անտես խավարում... (I, 30)
Իմ երազները ձեր գիրկն են թռչում,
Բարձր, դեպի վեր, արեգակին մոտ,
Ուր խենթ բոցերի խուրձեր դողդոջուն
Լուռ դալկանում են երկնում անաղոտ: (I, 75)*

Մինևույն խոսքաշարում համատեղ գործածված *անհուն-անտես, բարձր-դեպի վեր-արեգակին մոտ* բառերը ոճական նպատակադրում ունեն: Դրանց միջոցով բանաստեղծը ոճական հազեցվածություն, բազմազանություն է հաղորդում իր խոսքին, գեղարվեստական պատկերը ստանում է աստիճանական զարգացում, իսկ բանաստեղծության բովանդակությունը ամբողջանում է հոմանշային կապի մեջ գտնվող բառերի ու կապակցությունների իմաստային նրբերանգներով:

Իջնող աստիճանավորումը պայմանավորված է լեզվական միջոցների այնպիսի դասավորությամբ, որոնք իմաստային թուլացում են առաջացնում, ինչպես օրինակ՝

*Եվ տանջանք, և բեկում, և թախիծ,
Սև օրեր ես դեռ շատ կտեսնեմ,*

Անունդ թող փարոս լինի

Մուտ կյանքի և դառը մահու դեմ: (I, 95)

Ուշագրավ է, որ Տերյանը նույն բանաստեղծության շրջանակներում հաճախ է գուգակցում բարձրացող և իջնող աստիճանավորման հնարավորությունները, ինչպես օրինակ՝

Շողում են, դողում աղմուկով գվարթ,

Անխոս քարանում և նորից խաղում,

Անդունդից ելնում, դեմքիս ծիծաղում,

Խուլ շատաչում են, լարում են թակարդ... (I, 74)

Իջնող աստիճանավորում ստեղծող **շողալ-դողալ-անխոս քարանալ** բառային գուգորդումներից հետո բանաստեղծը բարձրացող աստիճանավորմամբ քնարական հերոսի հակառակ գործողությունների շղթան է առաջ բերում՝ **նորից խաղալ – ելնել –ծիծաղել – շատաչել – թակարդ լարել** իմաստային նրբերանգներով:

Տերյանի չափածոյի պատկերավորման համակարգում աստիճանավորումը համաչափ դասավորություն չունի, չի ենթարկվում որոշակի կադապարների: Նմանօրինակ աստիճանավորումները ոչ միայն նպաստում են խոսքի արտահայտ-չականությանը, այլև բազմազանություն են մտցնում խոսքի մեջ Հաճախ աստիճանավորումը պարզապես պայմանավորված է տվյալ ստեղծագործության կառուցվածքային հատկանիշներով, ասել է թե՛ բանաստեղծն այնպես է նկարագրում գործողությունների հաջորդականությունը, որ ստեղծվում է հույզերի ու ապրումների արտացոլման աստիճանական եղանակ, ինչպես օրինակ՝ ‘Հրաշք աղջիկ’ բանաստեղծության մեջ.

Հրաշք-աղջիկ, գիշերների թագուհի,

Ճառագայթող քո այքերով դու եկար,

Ոսկե բոցով լցրիր հոգին իմ տկար,

Հրաշք աղջիկ, ցնորքների դիցուհի...

Կախարդ լուսնի հրապուրող շողի պես

Դու ժպտացիր գուրգուրանքով սեթևեթ,

Ազատ սիրտըս շղթայեցիր առհավետ,

Հրաշք աղջիկ, դու միշտ հաղթող ու միշտ հեզ: (I, 43)

Աստիճանավորման գործածությունը խոսքը դարձնում է ավելի արտահայտիչ, ավելի վառ, հնարավորություն է ընձեռում տարբեր կողմերից գննելու և նկարագրելու առարկաները, երևույթները, գործողությունները, հատկությունները, մասնավորապես քնարական հերոսի ապրումները:

Տերյանի ստեղծագործություններում աստիճանավորում է ստեղծում նաև տողասկզբի կրկնությունը՝ համանման շարահյուսական սկզվածքը: Կրկնության այս տեսակը բնորոշվում է նրանով, որ շարահյուսական որևէ միավոր՝

նախադասություն, բառ, տող և այլն, սկսվում է միննույն բառով, բառակապակցությամբ⁷: Կրկնվող գործողությունները առաջ են բերում աստիճանավորում: Դիտարկենք օրինակ.

Ինձ թաղեք, երբ կարմիր վերջալույսն է մարում,

Երբ տխուր զգվանքով արեգակը մեռնող

Մարերի արծաթե կատարներն է վառում,

Երբ մթնում կորչում են ծով ու հող...

Ինձ թաղեք, երբ տխուր մթնշաղն է իջնում,

Երբ լռում են օրվա աղմուկները զվարթ... (I, 37)

Բոլոր սների սկզբում կրկնվող ինձ թաղեք կապակցությունը առավել ներ-գործուն է դարձնում կյանքի կարոտով լեցուն բանաստեղծի ողբերգական ապրումները, իսկ *երբ* դերանվան կրկնությունը ընթերցողի ուշադրությունը բնեռում է աշխարհից ու մարդկանցից հեռանալու տխուր պահի վրա: Այդպես բանաստեղծը իր խոսքի իմաստային կենտրոնում է պահում մի քանի բառեր և դրանցով սկսելով բանաստեղծական տողերը՝ ներկայացնում է ապրումի աստիճանական զարգացումը: Որպես աստիճանավորման կառուցման միավորներ հանդես են գալիս տարբեր բառեր ու բառակապակցություններ:

Աստիճանավորումը ապրված զգացողությունների շրջանակում ուրվագծում են քնարական հերոսի վիշտն ու կարոտը՝ միաժամանակ նպաստելով չափ ու կշռույթի գոյացմանը: Ասվածին ներդաշնակում է նաև բառերի հնչյունական կազմը, որը շարունակ փոփոխվում է:

Մթնշաղի անուրջներ՝ ժողովածուի բանաստեղծություններում աստիճանավորում ստեղծում են նախադասության տարբեր անդամները: Լայն կիրառություն ունի հատկապես ստորոգյալի միջոցով ստեղծվող աստիճանավորումը: Տերյանի հանրահայտ Մթնշաղ՝ ստեղծագործության մեջ աստիճանավորում են գոյացնում բազմակի ենթակայաներն ու ստորոգյալները: Այսպես՝

Չկա ոչ մի սահման դնող պայծառ շող,

Աղմուկի բեռ, մարդկային դեմք սիրտ մաշող-

Հիվանդ սիրտը չի տրտնջում, չի ցավում

Որպես երազ մոռացումի անձավում...: (I, 67)

Շատ հազվադեպ, բայց աստիճանավորման ստեղծմանը նպաստում է նաև նպատակի պարագան: Ահա մեկ հատված Միրահարվածը՝ բանաստեղծությունից.

Խենթացած բեռից այս չար մենության

Ես դուրս եմ վազում քեզ որոնելու,

Տեսնելու ցոլքրդ դեռ հեռվից-հեռու

⁷ Ա. Պապոյան, Չափածոյի լեզվական արվեստի հարցեր, Երևան, 1976, էջ 88:

Եվ հսկելու քեզ ստվերի նման: (I, 93)

Խենթ կարոտից տառապող քնարական հերոսը հոգնել է չար մենության խենթացած բեռից՝ և իր սիրո համար հանգրվան է որոնում: Մենակությունը հաղթահարելու համար վազում է փողոց, կանգնում սիրելիի դռան առաջ, հետո փախչում՝ օրհներգելով ու փառաբանելով նրան: Բանաստեղծությունում իշխող տրամադրությունը, գործողությունների ընթացքը արտահայտվում են աստիճանականությամբ կապված իրողություններ՝ տեսնել, որոնել ու հսկել:

Տերյանի ստեղծագործությունների լեզվի շարահյուսական համակարգի քննությունը ցույց է տալիս, որ աստիճանավորումը հաճախված է նաև բարդ համադասական նախադասություններում՝ իրենց իմաստային ու կապակցական բազմաբնույթ արտահայտություններով, կառուցվածքային ինքնատիպ լուծումներով: Բանաստեղծի խոսքարվեստում հաճախադեպ են նաև ենթակա, որոշիչ, ուղիղ խնդիր, ժամանակի պարագա կախյալ նախադասությամբ կապակցություններում դրևորվող աստիճանավորման օրինակները: Ահա աստիճանավորման օրինակ ժամանակի պարագա կախյալ նախադասությամբ կապակցություններից բաղադրված բանաստեղծական հատվածում.

*Ինձ թաղեք, երբ տխուր մթնշաղն է իջնում,
Երբ լռում են օրվա աղմուկները գվարթ,
Երբ շողերն են մեռնում, ծաղիկները – ննջում,
Երբ մթնում կորչում են լեռ ու արտ... (I, 37)*

Ուշագրավ են նաև շղթայական կերպով իրար հաջորդող որոշչային այն կա-ռույցները, որոնցում մի քանի կախյալ նախադասություններից յուրաքանչյուրը գերադասի առանձին անդամի է լրացնում, ինչպես՝ *Քո աչքերի խորությունը հրդեհավառ, Ուր վառված են մութ ցանկության ջահեր անխոս. Քո ժպիտը թունոտ ծաղկանց բույրի նրման, Որ տիրաբար արբեցնելով մահ է բերում...* (I, 85), *Ճառագայթներ, որ շողացին ու չրկան, Մթնշաղի ուրվագծեր նրբահյուս. կյանքս, հեռվում անհայտ կորած մի հեզ լույս, Որ չի վառում ոչ անցյալը, ոչ ներկան...* (I, 30) և այլն:

Հարկ է նկատել, որ Տերյանի ստեղծագործություններին առավելապես բնորոշ են եռանդամ և բազմանդամ աստիճանավորումները, իսկ երկանդամ աստիճանավորումը, որը հիմնականում դրսևորվում է բառային և խոսքային հումանիշների միջոցով, հուզական ազդեցության տեսանկյունից թույլ է, ինչպես օրինակ՝

*Թող շուրջս թովի անանց լռություն,
Թող ինձ չհիշեն, թող ինձ մոռանան: (I, 64)*
*Լացող ամպերի միգում անսահման
Թռչնեցին, անցան...
Անձրևն անընդհատ*

Մաղում է վիստ թաղումի կոծով,-

Տխուր, հուսահատ...: (I, 61)

Տերյանի չափածոյի երաժշտականության գաղտնիքը ոչ միայն հնչյունական ոճավորման, աստիճանավորման, պատերավորման մյուս միջոցների, այլև բառերի ճիշտ ընտրության, անթերի ռիթմական ընթացքի, հանգավորման և տողերի ներդաշնակության մեջ է: Այլ կերպ ասած՝ բանաստեղծի քնարերգության երաժշտականությունը վերաբերում է ոչ միայն տերյանական նրբագեղ լեզվին, այլև գեղարվեստական մարմնավորում ստացած զգացումների ու տրամադրությունների ելայնը: Այս առումով ուշագրավ է ներքոհիշյալ օրինակում առկա աստիճանավորման դեպքը.

Տարիներ, տարիներ կըսահեն,

Կըմեռնեն երազները բոլոր –

Քո պատկերը անեղծ կըպահեն

Օրերում անհաստատ ու մոլոր: (I, 95)

Բանաստեղծությունն ու երաժշտությունը միաձուլվել են և մեզ են ներկայանում մի ամբողջության մեջ: Սա է իսկական երաժշտականությունը, որը հնչյունների ուժով, համապատասխան բառերի առկայությամբ ստիպում է կերտել բանաստեղծական հրաշագեղ պատկեր: Բացի տողերի հանգային վերջավորություններից և ա ձայնավորի առձայնությից, որն ուղղակի բխում է մեր լեզվի հնչյունային կազմի առանձնահատկություններից, ուրիշ հնչյունական նմանություններ չկան դիտարկված օրինակում: Բանաստեղծության անվիճելի երաժշտականությունը պայմանավորված է լեզվական ու ռիթմական բոլոր միավորների, այդ թվում՝ աստիճանավորման յուրօրինակությամբ:

Տերյանի բանաստեղծական խոսքի երաժշտականության ստեղծման կարևոր գործոններից մեկն էլ նմանահունչ բառերի կրկնությամբ կազմված աստիճանավորումն է: Փոքրածավալ բանաստեղծություններում նույնիսկ բառի 3-4 անգամ կրկնելն արդեն նպաստում է չափ ու կշռույթի ուժեղացմանը՝ գոյացնելով առձայնությ կամ բաղաձայնությ: Ըստ Ա. Զաքարյանի՝ նշված հատկանիշի թելադրանքով է, որ արդեն սովորական դարձած ավանդությամբ Տերյանի բանաստեղծությունները համարվել ու համարվում են մեղմօրոր երգեր⁸: Բանաստեղծի ավելի քան 100 ստեղծագործությունների հիման վրա երգահանները հիասքանչ մեղեդիներ են ստեղծել⁹:

Ճիշտ է ասված՝ բանաստեղծությունը սերում է երգից, որի մեղեդին միշտ հուզական է: Անջատվելով մեղեդուց և վերածվելով բառի ինքնուրույն արվեստի՝ չափածոն պահպանել է երաժշտականության մի շարք հատկանիշներ¹⁰:

⁸ Ա. Զաքարյան, Գրական արձագանքներ և հուշեր, Երևան, 1985, էջ 217:

⁹ Տե՛ս Վահան Տերյանը երաժշտության մեջ (տեղեկատու), Երևան, 2008, Ռ. Դավթյան, Վահան Տերյանի պոեզիան երաժշտության մեջ, Երևան, 2007:

¹⁰ В. Холшевников, Основы стиховедения: Русское стихосложение, Ленинград, 1972, с. 75.

Բանալի բառեր – աստիճանավորում, բարձրացող աստիճանավորում, իջնող աստիճանավորում, պատկերավորման միջոց, ոճական հնար, շարահյուսական դարձույթ, «Մթնշաղի անուրջներ», խոսքարվեստ, երաժշտականություն:

Մերի Հովհաննիսյան, Աստիճանավորումը Վահան Տերյանի «Մթնշաղի անուրջներ» բանաստեղծական շարքում – Չափածոյի հնչյունական հարստությանը հատուկ նշանակություն տվող Վահան Տերյանն իր անգերազանցելի տեղն ունի աստիճանավորում ստեղծելու գործում: Աստիճանավորումը բանաստեղծի պոեզիայում ստեղծվում է բայերի, գոյականների միջոցով: Ոճական արժեքով առանձնանում է հատկապես միակազմ նախադասություններում հանդես եկող աստիճանավորումը: Վ. Տերյանի ստեղծագործություններում աստիճանավորումը նպաստում է գեղարվեստական կոնկրետ խնդիրների լուծմանը և բանաստեղծի ոճը հատկանշող լեզվական միավոր է:

Мери Оганнисян, Градация в сборнике стихов Ваана Терьяна «Грэзы сумерек» – Ваан Терьян, который придавал особое значение богатству мелодичности стихотворений, имеет свое непревзойденное место в деле создания градации. Градация в сборнике стихов «Грэзы сумерек» создается посредством вербальных и субстантивных средств. Своей стилистической ценностью выделяются образцы градации, выступающие в односоставных предложениях. Градация в произведениях Терьяна способствует решению конкретных художественных проблем и является языковой единицей, охарактеризующей стиль поэта.

Meri Hovhannisyán, The phenomenon of gradation in the series of poems “Twilight Dreams” by Vahan Teryan – Vahan Teryan, who has always attached great importance to the phonetic richness of poetry, played a unique role in the creation of gradation. The phenomenon of gradation in the series of poems “Twilight Dreams” is created through verb and noun phrases. The examples of gradations found in mononuclear sentences stand out with their particular stylistic value. In Teryan's poems, gradation serves as a basis for the solution of specific artistic issues and is a linguistic unit characterizing the style of the poet.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Դավթյան Ռ., Վահան Տերյանի պոեզիան երաժշտության մեջ, Երևան, 2007:
2. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2003:
3. Խլղաթյան Ֆ., Ոճաբանական բառարան, Երևան, 2000:

4. Զաքարյան Ա., Գրական արձագանքներ և հուշեր, Երևան, 1985:
5. Մարության Ա., Եղիշե Չարենցի շափածոյի լեզուն ու ոճը, Երևան, 1979:
6. Պապոյան, Չափածոյի լեզվական արվեստի հարցեր, Երևան, 1976:
7. Զրբաշյան Է., Գրականության տեսություն, Երևան, 1972:
8. Վահան Տերյանը երաժշտության մեջ (տեղեկատու), Երևան, 2008:
9. Տերյան Վ., Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 1, Երևան, 1972:
10. Рубайло А., Художественные средства языка, Москва, 1961.
11. Холшевников В., Основы стиховедения: Русское стихосложение, Ленинград, 1972.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՆԱԹԵԼԼԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

1921 թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՍԲՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ5

ԲՈՐԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ
ԵՎ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1
992-2002 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ11

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԵԼԻՆԵ ԳԻԼԱՎՅԱՆ, ԶՈՅԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ԻՐԱԿԱՆՆՆ ՈՒ ԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆԸ
ԷՂՈՒԱՐԴ ՄԻԼԻՏՈՆՅԱՆԻ «ՍԱՏԱՆԻ ԿԱՍՈՒՐՋԸ» ՎԵՊՈՒՄ23

ԶՈՅԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ԿՈՐՈՒՍՅԱԼ ԵԶԵՐՔԻ ԿԱՐՈՏԸ ՌՈԼԱՆԴ ՇԱՌՈՅԱՆԻ
ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ28

ՎԱՀԱՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԵԾ ԱՆՀԱՏԸ Ս. ԽԱՆԶԱԴՅԱՆԻ
«ՎԱՐՔ ՀԱՐԱՆՅ» ՇԱՐՔՈՒՄ33

ԲԱԳՐԱՏ ՆԵՐՄԻՍՅԱՆ, ԱՍՅԱ ԴԱՐԲԻՆՅԱՆ

ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՎՐԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ42

ՄԵՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ
«ՄԹՆՇԱՂԻ ԱՆՈՒՐՋՆԵՐ» ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՇԱՐՔՈՒՄ48

ՀԱՍՄԻԿ ՄԿՐՏՁՅԱՆ
ԿԵՆԱՑՆԵՐԻ ԼԵԶՎԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ.....58

MYRA KARAPÉTIAN
LES EXPRESSIONS IMAGÉES EN FRANÇAIS ET EN ARMÉNIEN.....71

SVETA OHANYAN
LA RHÉTORIQUE COMME ART DE PERSUASION.....79

КРИСТИНА АРУТЮНЯН
СИМВОЛИКА ЦВЕТООБОЗНАЧЕНИЙ "BLUE" И "BROWN"
В ПРОИЗВЕДЕНИЯХ АНГЛОЯЗЫЧНЫХ АВТОРОВ И
ОСОБЕННОСТИ ИХ ПЕРЕВОДА.....84

MARKUHI VOSKANYAN
ROLE OF POLITICAL EUPHEMISMS AND THEIR
TRANSLATION STRATEGIES.....94

ZARUHI ANTONYAN
THE CONCEPT OF COLOR IN IDIOMATICITY.....102

ՆԱՐԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ ԽՈՍՔԱՅԻՆ ԱԿՏԻ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ-
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....111

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՄԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ, ՀՐԱՆՏ ՂԱՐԱԳՅՈՁՅԱՆ
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԴԵՐԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ.....120

ՆՈՆԱ ԽԱԶԱՏՐՅԱՆ
ՈՒՍԱՆՈՂԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 131

ՇՈՒՇԱՆ ԶԻՐՈՅԱՆ

ՇՈՒԿԱՅԻ ԱԶԱՏ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱԶՈՂ ԱՊԱՀՈՎՍԱՆ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ,
ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ.....137

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԵԼԼԻ ՀԱՐՈՅԱՆ, ԱՇԽԵՆ ՄԿՈՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՃԵՐԻ ԵՒ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....145

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ԳԵԻՈՐԳՅԱՆ

«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ.
ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....152

ՎԱՀԵ ԱՂԱՍԱՐՅԱՆ

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ
ԱՐԴԻ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ.....168

ВААГН АСРЯН

ЗАРУБЕЖНЫЕ МОДЕЛИ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ
В КОНТЕКСТЕ РЕШЕНИЯ ЗАДАЧ ОБЕСПЕЧЕНИЯ
ЖИЗНЕДЕЯТЕЛЬНОСТИ И РАЗВИТИЯ
ТЕРРИТОРИАЛЬНОЙ ОБЩИНЫ.....178

ЕВГЕНИЯ ГЯНДЖУМЯН

ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ОПРЕДЕЛЕНИЯ ПРИЗНАКОВ
ОГРАНИЧЕННЫХ ВЕЩНЫХ ПРАВ РА.....185

ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ

ԱՍԱԼՅԱ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀԵՔԻԱԹԻ ԺԱՆՐԸ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՍԵԹՈՂՆԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ

ԴՊՐՈՑԻ 5-ԸՂ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ.....192

ՄԻՐԱՆՈՒՇ ՂՈՒՇՅԱՆ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԱՆԻ

«ԿՈՈՒՆԿ» ՊԱՏՄՎԱԾՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ.....197

ՆՈՒՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ

ԱՌԱՂՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ.....203

ՄԱՐԻԵՏԱ ՃԱՂԱՐՅԱՆ, ԷԴԻԿ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ,

ՍՏԵԼԼԱ ՍԱՆԹԱՇՅԱՆ

ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ

ԺԱՍՆԱԿԱԿԻՑ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ.....210

ՎԱՐՔ ՍԵԾԱՑ.....220

A K U N Q
COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES
NUMBER 4 (20)

Executive editor: A. A. NERSISYAN

Cover and content design: T. V. SARGSYAN

Format: 70x100/16. Size: 15 sheets. Copies: 100.

YSU Publishing House

Yerevan, 0025, Al. Manukyan 1